«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը պատմության դասավանդման համատեքստում:

Առարկան՝ Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:

Հետազոտող ուսուցիչ՝Դավիթավյան Արա Վոլոդիայի

Ուսումնական հաստատություն՝Օձունի N 2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն։
2. Ուսուցման ձևերը և նրա առանձնահատկությունները։
3. Ուսուցման կազմակերպման ձևերը։
4. Ինքնուրույն աշխատանքի տեսակներն ու դասակարգումը։
5. Ինքնուրույն աշխատանքների վերլուծությունը և վերջնարդյունքները։
6. Եզրակացություններ։
7. Օգտագործված գրականության ցանկ։

Ներածություն

Իմացական գործընթացների օգնությամբ մարդն արտացոլում է արտաքին աշխարհն ու ինքն իրեն մտածողության օգնությամբ։

Մտածողությունը շրջապատող աշխարհի միջնորդավորված ու ընհանրացված իմացությունն է։ Մտածողությունն էապես նորի որոնման, հայտնագործման գործընթաց է։ Քարեդարյան քարանձավ-կացարանից մինչև ժամանակակից երկնաքերեր մարդկային մտածողության շարունակական և անընդհատ մտածողության արդյունք են։

Մտածողությունը ծագում է այնտեղ, որտեղ առկա է խնդիր, հիմնահարց և բոլոր հայտնագործությունները մարդուն հուզող կոնկրետ հիմնախնդիրների արդյունք են։

Մտածողությունը սերտ կապված է խոսքի հետ։ Մարդը մտածում է հասկացությունների, դատողությունների և մտահանգումների միջոցով։

Մտածողությունը դասակարգվում է հետևյալ հիմնական տեսակների.

1. Ակնառու-գործնական մտածողությունն իրագործվում է առարկաների հետ կոնկրետ, շոշափելի գործողություններ կատարելու ընթացքում։
2. Ակնառու-պատկերավոր մտածողությունն իրագործվում է մտապատկերների հետ կատարվող գործողությունների միջոցով։
3. Խոսքային տրամաբանական մտածողությունն ընթանում է խոսքի,լեզվի պարտադիր մասնակցությամբ։

Հետազոտության աշխատանքի նպատակը ուսումնառության ընթացքում աշակերտների մոտ մտածողության ինքնուրույն ձևավոումը, զարգացումը և ամրապնդումն է։

Մարդիկ տարբերվում են իրենց մտածողության անհատական ատանձնահատկություններով.

1. Մտածողության ինքնուրույնությունը բնութագրվում է նրանով, որ մարդն ունակ է առաջադրելու նոր խնդիրներ և գտնելու դրանց լուծման ուղիները՝ յուրացնելով և ստեղծագործաբար կիրառելով մարդկության կուտակած փորձը։
2. Մտքի լայնությունը թույլ է տալիս գտնել կապեր գիտելիքների և երևույթների տարբեր, առաջին հայացքից իրարից հեռու բնագավառների միջև։
3. Մտքի խորությունն արտահայտվում է բարդ հարցերի մեջ խորանալուայնտեղ խնդիր տեսնելու կարողությամբ։
4. Մտքի ճկունությունը թույլ է տալիս հաշվի առնել իրադրությունների փոփոխությունը և փոխել գործողությունների սկզբնական պլանը։

5. Մտքի արագությունը դրսևորվում է իրադրության մեջ արագ կողմնորոշվելու , լավ մտածելու և ճիշտ որոշում ընդունելու կարողությամբ։

Մարդկային մտածողությունն անընդհատ, շարունակական գործընթաց է , այն ձևավորվում, ամրապնդվում է ուսումնառության ընթացքում։

Մարդը սովորում է ամեն ինչ։ Բացի դպրոցական առարկաներից նա սովորում է սովորել , սովորում է լռել, հասկանալ, սովորում է որոշումներ կայացնել…

Մարդն անընդհատ սովորում է , այն յուրաքանչյուր մարդու անհատական ընտրությունն է ։

Նա ինքն է որոշում ՝ լինել սովորող, թե ոչ։ Արդի աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները ցույց են տալիս, որ հարափոխփոխ մեր աշխարհում շատ կարևորր է բաց միտք , ինքնուրույն մտածելու և ինքնուրույն ճիշտ որոշումներ կայացնելու ընդունակություններ և հմտություններ ունենալը։

Ժամանակակից աշխարհում շատ կարևոր է քննադատական և ստեղծագործական մտածողությունը։

Թյուր կարծիք կա, քննադատությունը համարելով որոշակի տեսակետների մասին բացասական վերաբերմունք։

Քննադատական մտածողությունը ենթադրում է

1. Հստակ ձևակերպել հարցեր և հիմնախնդիրներ
2. Հիմնախնդիրներին վերաբերող տեղեկություններ հավաքել և մեկնաբանել։
3. Կշռադատված եզրահանգումներ կատարել
4. Բաց է այլոց կարծիքների հանդեպ
5. Կարողանում է արդյունավետ հաղորդակցվել խնդիրներ լուծելու նպատակով

Քննադատական մտածողության կարևոր տարերրից է արդարամտությունը, երբ կողմերը պետք է կարողանան տեսնել ոչ թե դիմացինի, այլ նաև իրենց տեսակների թույլ կողմերը։

Քննադատական մտածողության դրսևորումներ են

- ☑ Արժևորումը
- ☑ Հիմնավորումը
- ☑ Դասակարգումը
- ☑ Վերլուծությունը

Ստղծագործական մտածողությոնը շատ նման է երևակայությանը։ Այն մարդու ներքին կարողությունն է։ Ստեղծագործական մտածողությունը երևակայության կիրառումն է։

Ելնելով հանրակրթական պետական չափորոշչի սովորողին ներկայացվող պահանջներից՝ որի արդյունքում աշակերտների մոտ պետք է ձևավորել ինքնուրույն և ստեղծագործական-քննադատական մտածողություն, զարգացնել կարողություններն ու հմտությունները, իմաստավորել ու արժևորել ազգային արժեքային համակարգը։

Հետազոտական աշխատանքի մեջ զետեղել եմ ավելի քան երեսունամյա իմ մանկավարժական փորձը, մեթոդներ ու հնարներ, որոնք սովորել եմ ինչպես մեթոդական ձեռնարկներից, այնպես էլ այլ մանկավարժներից։

Ուսումնական առանձնահատկությունները և տեսակները:

Ուսուցումն անընդհատ, շարունակական նպատակաուղղված գործընթաց է, որի ընթացքում աշակերտները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, շրջապատող աշխարհի նկատմանբ դիրքորոշում, վերաբերմունք և արժեքային դաստիարակություն:

Ուսուցման գործընթացում կախված թեմայից , դասի նպատակներից , դասարանից, աշակերտների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում
- մոդելների, քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում
- էքսկուրսիաների անցկացում
- նկարների ֆիլմերի դիտում, քննարկում
- ուսումնական ձեռնարկների ուսումնասիրում
- գործնական աշխատանքների կատարում
- հիմնահարցերի հետազոտություն
- ստեղծագործական աշխատանքների կատարում
- տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում
- խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում
- իրավիճակների ու արդյունքների վերլուծություն
- հաշվետվությունների պատրաստում
- գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում
- բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքերի անցկացում
- նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում
- անհատական, խմբային , ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Պատմության ուսուցումը չի կարելի կազմակերպիել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: ՈՒսուցման մեթոդներն ուսումնական նյութի կազմակերպման և ուսուցման ընթացում ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեության միջոց են:

Ինչպես ասում էր հայտնի մանկավարժ Մ.Ն.Սկատկինը «մեթոդը ճանապարհ է , որով ուսուցիչն աշակերտին տանում է անգիտակցությունից դեպի գիտելիք անկարողությունից դեպի կարողություն, նրա մտավոր ուժերի զարգացման ուղի»

Մեթոդները պատասխանում են ինչպե՞ս սովորեցնել սովորել հարցին։

Ցանկացած ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակաուղղված գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ և սպասված կամ ակնկալվող վերջնարդյունք։

Պատմության ուսուցման ընթացքում հազվադեպ կարող է պատահել, որ որևէ մեթոդ մաքուր կիրառվի դասի ամբողջ ընթացքում։

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում պատմության ուսուցման մեթոդիկայում մշակվել են և կիրառվում են նոր մեթոդներ։

Ներկա փուլում դպրոցին պետք են ճանաճողական ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները, հետևաբար նաև տեսական մտածողությունը։

Բացի դրանից մեթոդները պետք է նպաստեն ուսուցման զարգացող բնույթի արդյունավետության բարձրացմանը։

Եվ հաշվի առնելկով այս խնդիրները ՝ մի շարք դիդակտիկաներ սկսեցին որոնել ուսուցման առավել արդյունավետ մեթոդներ։

Պ.Ս. Լեյբենգրուբը պատմության ուսուցման մեթոդները դասակարգել է ըստ ուսուցման նպատակների, տրամաբանական կատեգորիաների , սովորողների գիտելիքների ձեռք բերելու միջոցների, ուսուցչի և սովորողների ուսումնական գործունեության բնույթի։։

Դիդակտիկներ Սկատկինը և Ի.Յա.Լերները, որպես արդյունավետ մեթոդներ, առաջարկեցին բացադրական-ցուցադրական, ռեպրոդուկտիվ (վերարտադրողական), մասնակի որոնողական և հետազոտական մեթոդներ։ Դանիլովը և Եսիպովը առաջարկեցին նոր գիտելիքների ձեռք բերման գործում հմտություններ և կարողություններ մշակող, ստուգող և գնահատող մեթոդներ։ Մահմուտովը կարևորեց գիտելիքներն արթնացնող և համախմբող , հրահանգչական, պրոբլեմային շարադրանքի , էվրիստիկ զրույցի, հետազոտական մեթոդներ։

Սակայն դրանցից ո՞ր համակարգը պետք է համարել արդյունավետ։ Չի կարելի մեթոդների որևէ համակարգ համարել հայուր տոկոսով արդյունավետ։ Ավելի արդյունավետ դաս ունենալու համար անհրաժեշտ է դրանք համադրել իրար և զուգակցել պատմության յուրաքանչյուր դասին, կամ նրա առանձին հատվածների ընթացքում։

Ինչպես մյուս առարկաների, այնպես էլ պատմության ուսուցման մեջ մեթոդների ընտրության հարցը մանկավարժական բարդ խնդիր է , որի ճիշտ լուծումից էլ կախված է դասի և ուսուցման արդյունավետությունը:

Մեթոդները ըստ Վագինի դասակարգվում են չորս հիմնական խմբի,նրանից հետո այս դասակարգումը զարգացրել է Գորան:

- Առաջինը խոսքային մեթոդն է , որի մեջ մտնում են բանավոր շարադրանքի մեթոդն իր տեսակներով, զրույցի մեթոդը, տպագրված նյութերի, գրքերի և դասագրքերի վրա տարվող աշխատանքի մեթոդը:
- Երկրորդը զննականությունն է: Դրանք են բոլոր տեսակի դիտումները, ցուցադրումները, էքսկուրսիաները:
- Երրորդը գործնական աշխատանքի մեթոդն է, երբ տրվում են տարբեր տիպի գրավոր աշխատանքներ, տրամագրեր, գրաֆիկական աշխատանքներ, վարժություններ և այլն:
- Չորրոդը սովորողների ինքնուրույն աշխատանքի մեթոդն է, ինքնուրույն աշխատանք դասարանում, արտադասարանական աշխատանքի ժամանակ, տանը՝ դասագրքերով, սկզբնաղբյուրներով:

Այս մեթոդները կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնելայն առանձնահատկությունները, որոնք ի հայտ են գալիս ուսուցման ընթացքում և թե որքան են դրանք նպաստում ակնկալվող վերջնարդյունքի արտացոլմանը:

Օրինակ, եթե դասապրոցեսի ընթացքում կազմակերպվել են պատմական փաստաթղթերի կամ վավերագրական նյութերի վրա աշխատանք , որը ենթադրում է սովորողների

ինքնուրույնություն, այս դեպքում նպատակահարմար է կիրառել անմիջական զրույց դասի անցկացման եղանակը:

Մեկ այլ դեպքում , եթե սովորողին հանձնարարվել է դասագրքում զետեղված նկարի վերլուծական աշխատանք՝ դիմում ենք զննականությանը: Շատ հաճախ ավագ դպրոցի աշակերտներին հանձնարարում եմ որպես տնային աշխատանք նկարի կամ պատմական որևէ իրադարձության վերաբերյալ շարադրություն:

Եթե անհրաժեշտ է դպրոցականներին ծանոթացնել նախնադարյան աշխատանքային գործիքներին , դասարան են բերվում քարի զանազան տեսակներ, կամ դրանք նկարում ենք գրատախտանն՝ դիմելով զննականությանը: Եթե պետք է ծանոթանալ որևէ հեղափոխության ընթացքի, դիմում ենք խոսքային մեթոդին:

Ինքնուրույն աշխատանքի տեսակները և դասակարգումը:

Ինքնուրույն աշխատանքները կարելի է դասակարգել ինչպես իրեց ձևի, կառուցվածքի, բնույթի, այնպես էլ դրանք պայմանավորված են ինքնուրույն աշխատանից առաջադրվող նպատակներից և խնդիրներից, ինչպես նաև կարողություններին ուղղված և առաջադրված խնդիրներից:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

- ✓ **Աշխատանք դասագրքով**
- ✓ **Աշխատանք սկզբնաղբյուրի հետ**
- ✓ **Ստեղծագործական շարադրություն**
- ✓ **Շրջագայություն պատկերասրահում**
- ✓ **Նկարի կամ իրադարձության վերլուծություն**
- ✓ **Պատմական դեպքի կամ իրադարձության հետազոտություն**

Ինքնուրույն աշխատանքներն ըստ իրենց բնույթի կարող են լինել գրավոր շարադրանք, պաստառի պատրաստում, առարկայի մոդելավորում, թվային մեդիա:

Ինքնուրույն աշխատանքներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշակերտների ինչպես մտավոր, այնպես էլ տարիքային առանձնահատկությունները:

Միջին դպրոցի աշակերտներին հիմնականում հանձնարարում եմ պաստառների պատրաստում, պատմական իրադաձության կամ պատմական գործչի վերաբերյալ տեղեկություն: Իսկ աշակերտների ընդունակությունները հաշվի առնելով դրանք կարող են լինել նկարների, պաստառների, ապլիկացիաների և գրավոր շարադրանքի տեսքով:

Ավագ դպրոցի աշակերտներին ավելի հաճախ հանձնարարում եմ վերլուծական բնույթի , քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնող ինքնուրույն աշխատանքներ: Դրանցից են պատմական դեպքի , ժամանակաշրջանի ուսումնասիրությունը, վերլուծությունը և ներկայացումը: 10-12-րդ դասարանների ուսումնական նյութից հիմականում առանձին թեմաներ, որոնք ուսումնբասիրում եմն ժամանակաշրջանը, տնտեսությունը պետական կարգը, բանակը , կրոնական համակարգերը, որպես ինքնուրույն աշխատանք հանձնարարում եմ համեմատություն պահանջող վերլուծական աշխատանքներ, պաստառների պատրաստում և այլն:

Պատմական դեպքի կամ իրադարձության մասին հիմնականում հանձնարարում եմ դերային խաղ. ի՞նչ կանեի ես կամ ի՞նչ կարող եմ անել:

Հաշտության պայմանագրերը կամ համաձայնագրերը ուսումնասիրելիս հիմնականում հանձնարարում եմ ուսումնասիրել ակզբնաղբյուրները և վերականգնել ստեղծագործական մտածողության միջոցով բանակցող կողմերի հագ ու կապը, կենցաղավարությունը և այլն:

Տնտեսության ուսումնասիրության ընթացում հանձնարարում եմ առանձին ինքնուրույն անհատական աշխատանքներ տնտեսության տարբեր ճյուղերի, արհեստների տարբեր բնագավառների մասին աշխատանքներ: Առնտուրը թեման հանձնարարում եմ ավելի շատ դասագրքից դուրս ուսումնասիրել թե ի՞չ դրամական խնդիրներ էին առաջանում միասնական չափ ու կշռային համակարգ չլինելու դեպքում, ինչպե՞ս էին դրանք լուծվում:

Պատմական ակտիվ մտածողության ձևավորման և զարգացման վրա բավականին դրական ազդեցություն է թողնում «Գիրք պատմության ուսուցման,ինչու՞ և ինչպե՞ս» աշխատությունը: Գիրքն օգնում է յուրովի հասկանալ պատմությունը, այն ավելի խորությամբ ընկալել և կատարել վերլուծական և տրամաբանական եզրահանգումներ:

Գրքի ռազմավարությունների տարաբնույթ ուղղվածությունը թույլ է տալիս այն կիրառել ցանկացած թեմայի ուսուցման ընթացքում՝ տնտեսությունից մինչև արհեստ և մշակույթ, քաղաքականությունից մինչև միջազգային հարաբերություններ:

Գիրքն արդյունավետ է նախագծային կրթությունը զարգացնելու տեսանկյունից և հնարավոր է դարձնում միջառարկայական կապերով էլ ավելի զարգացնելու առարկայի դասավանդումը:

Գրքում ընդգրկված ուսումնական ռազմավարություններից յուրաքաբչյուրը հնարավորություն է տալիս զարգացնելու պատմական ակտիվ մտածողության կարողունակությունները՝

- ✓ **Լեզվական**
- ✓ **Ճանաչողական**
- ✓ **Սոցիալական**
- ✓ **Ժողովրդավարական**
- ✓ **Տնտեսական**
- ✓ **Մաթեմատիկական**
- ✓ **Գիտատեխնիկական**
- ✓ **Արժեքային**
- ✓ **Իմացական**

Ինքնուրույն աշխատանքի հանձնարարումը, վերլուծությունը և վերջնարդյունքները

Յուրաքանչյուր ինքնուրույն աշխատանք հանձնարարելիս՝ անհրաժեշտ է դրանց համար սահմանել նպատակներ և խնդիրներ։

Նպատակները պետք է հետապնդեն ուսումնառությանը ներկայացվող կոմպետենցիաներից բխող դրույթներից։ Դրանք են լեզվական-մտածողական, ինքնաճանաչողական և ոցիալական, մշակութային, տնտեսական, ժողովրդավարական, գիտատեխնիկական և այլ կոմպետեցիաներին ուղղված աշխատանքեր։

Միջին դպրոցի VI-IX դասարանի աշակերտներին հիմնականում հանձննարարում եմ այնպիսի ինքնություն աշխատանքեր, որոնք զարգացնում են խոսքային(բանավոր և գրավոր) հաղորդակցումը, ինքնաճանաչողությունը,մշակութային և գիտատեխնիկական կոմպետեցիաները։ VI-VII դասարանում հիմանականումդրանք կարճ բնույթի են, կատարվում են դասարանում կամ որպես տնային աշխատանք։ VIII-IX դասարաններում ինքնուրույն աշխատանքները համեմատաբար երկար բնույթի են,պահանջում են հետազոտական և վերլուծական, ինչպես նաև ստեղծագործական մտածողության ձևավորում և ամրապնդում։ Նմանատիպ ինքնուրույն աշխատանքերը դասակարգում եմ հետևյալ կերպ՝

- ✓ Աշխատանք սկզբնաղբյուրի հետ
- ✓ Պատմական դեպքի վերլուծություն
- ✓ Ժամանակաշրջանի վերականգնում
- ✓ Պատմական անհատի բնութագրում
- ✓ Հասարակարգի և պետական կարգի վերլուծություն
- ✓ Տնտեսության ներկայացում

Ավագ դպրոցի աշակերտներին հանձնարավող ինքնուրույն աշխատանքերին ներկայացվող պահանջները գրեթե նույնն են , սակայն պահանջում եմ ոչ միայն նյութի հետազոտություն , նաև վերլուծություն և եզրակացություն։

Այդ պահանջներից բացի փոխվում է նաև կոմպետեցիաների խումբը։

Ավելի շատ հանձնարարում եմ ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական, մշակութային և ֆինանսական, տնտեսական կոմպետեցիաների ձևավորմանը և ամրապնդմանը նպաստող ինքնուրույն աշխատանքեր։ Դիտարկենք մի քանի կոնկրետ օրինակներ՝VI դասարանի «Հայոց պատմություն» առարկայից աշխատանք սկզբնաղբյուրի հետ բաժնից կարելի

է առանձնացնել հույն պատմիչ և զորավար Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունից Հայաստանի և հայերի մասին սկզբնաղյուրի ուսումնասիրությունը։ Հանձնարարելով ինքնուրույն աշխատանքը առաջադրում են հետևյալ կոմպետեցիաները՝

- ✓ Տնտեսական
- ✓ Մշակութային
- ✓ Սոցիալական
- ✓ Ռազմահայրենասիրական

VII դասարանում հանձնարարում եմ ինքուրույն աշխատանքեր, առաջադրելով հետևյալ պահանջներից ելնող նպատակներ և խնդիրներ։Աշխատանք ուրվագծային քարտեզով, ճանապարհորդության վերականգնում, ժողովուրդների մեծ գաղթը, աշխարհագրական հայտնագործություններ և այլ բնույթի աշխատանքեր։ X-XII դասարաններում հանձնարարում եմ պատմական դեպքի ուսումնասիրություն, ժամանակաշրջանի վերականգնում, ժողովրդավարության վերականգնում, ժողովրդավարության բնութագրիչների ուսումնասիրություն, վերլուծություն և եզրակացություն։ Նմանատիպ աշխատանքերից կարող եմ առանձնացնել ամբողջատիրական և ժողովրդավարական վարչակարգերի համեմատությունը, գիտատեխնիկական հեղափոխության վերլուծությունը, հասարակարգի բնութագրումը, արդի աշխարհի հիմնախնդիրները, ինչպես ընդհանուր այնպես էլ առանձին քննարկումների միջոցով։ Գլոբալացիա, շրջակա միջավայրի պաշտպանություն, թրաֆիքինգ և այլն։

Եզրակացություններ

Հետազոտական աշխատանքը կատարելու ընթացքում իմ աչքի առաջ կենդանացավ, կինոժապավենի նման անցավ և՛ իմ աշակերտների ձեռքբերումները ու հաջողությունները, և ձախողումները։ Ուսումնական գործընթացը պահանջում է համառություն, կամք, համբերություն, ջանասիրություն և նպատակին հասնելու ձգտում։

Վերոնշյալ որակների ձեռքբերմանը և ամրապնդմանը կարծում եմ՝ ամենից շատ նպաստում է ուսուցչի և ծնողի ուղղորդմամբ սովորողի ինքնուրույնության ձևավորումը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հասարակագիտության ուսուցչի ձեռնարկ 10-12-րդ դասարանների համար: Երևան «Տիգրան Մեծ» 2019թ.:

2. Համաշխարհային պատմություն ուսուցչի ձեռնարկ 10-12-րդ դասարանների համար: Երևան «Տիգրան Մեծ» 2018թ.:

3. Հայոց պատմություն ուսուցչի ձեռնարկ 10-12-րդ դասարանների համար: Երևան «Տիգրան Մեծ» 2018թ.:

4. Հայոց պատմություն ուսուցչի ձեռնարկ 8-9-րդ դասարանների համար: Երևան «Տիգրան Մեծ» 2018թ.:

4. Գիրք պատմության ուսուցման. ինչու՞ և ինչպե՞ս: Պարադիգմա կրթական հիմնադրամ- Երևան 2020թ.: